

արտադրութիւններ: Դաշտավայրերուն մէջ, Սէլէֆքէի ու Սիսի միջեւ, կը գտնուին տաք ու բարեխառն երկիրներու արտադրութիւններ, իսկ լեռնադաշտերու մէջ կարտադրութիւնն ցուրտ կլիմաներու յատուկ բերք: Վարի կողմերը կը մշակուին՝ ցորեն, գարի, վարսակ, հաճար, շուշմայ, եգիպտացորեն, բամպակ, բրինձ, աֆիոն, խաղող, նարինջ, շաքարեղէգն, իւզոտ հունտերու իբր ամէն տեսակ ընդեղէն: Վերի կողմերը կաճին կեռաս, տանձ, դեղձ, կաղին և նման միբղեր: Ատանայի մէջ կան երկու մեծ անտառներ ձիթենիի, մին Զէյթունլըգ, որ Աղեքսանդրէտի Հիւսիսի կողմէն սկսելով կերկարի մինչև Բահաս և ունի 40,000 արտավար տարածութիւն. միւսը Պողազ-աղաճ, ուր բաց 'ի ձիթենիներէ կան նաև թթենիներ. ունի 30,000 արտավար տարածութիւն:

Ատանայի ճարտարագործութեանց մէջ կարևոր տեղ մը կը գրաւեն բամպակ զանլու, մանած կտաւ, ալիւր և սառոյց պատրաստելու գործերը: Ատանայի արտածելի վաճառքն են՝ արմտիք, բամպակ, շուշմայ, գըլստոր, բուրդ, շինութեան և վառելի փայտ, արջառ, մորթ, խոզակ ևլն.: Այս նահանգ՝ միջին թիւով կարտածէ 30,000 թոնոյ ցորեն, 15 միլիոն օխայ շուշմայ, 50,000 հակ (200 քիլոնոց) խամ բամպակ, 100—150,000 քիլոյ չոր խոզակ, 30—40,000 սնտուկ նարինջ: Յուսաւի է՝ որ Կիլիկիայի այժմու Կաթողիկոսութեան անկեղծ ջանքով տեղացի Հայք աւելի զարգացեալ դիրքերու տիրանան դիւր յաջողութեամբ երկիրի մը մէջ՝ որ իր արգաւանդութեամբ և ծովեղերեայ հաղորդականութեամբ՝ ընդանդեան Վոսփորէն ետք՝ ամէնէն յարմարն է Թուրքահայոց վաճառական յառաջդիմութեան:

Գալով Սեւ Ծովու եղերքն ու Փոքր-Ասիոյ գլխաւոր վաճառական քաղաքները, ասոնց մէջ թէպէտ նոր